

Քրդական հիմնախնդիրը ԻԻՀ-ում Մ. Ահմադինեժադի նախագահության տարիներին (2005-2013 թթ.)

Պետրոսյան Լիանա Ռ.

Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս, պ.գ.թ. (Երևան, ՀՀ)
lianapetrosyan@ysu.am

ՀՏԳ՝ 323.1 EDN: VNDILA

Հանգուցաբառեր՝ ԻԻՀ, Ա. Խամենեյի, Մ. Ահմադինեժադ, հոգևոր առաջնորդ, քրդական հիմնախնդիր, Մեծ Քրդստան, Իրանական Քրդստան, Քրդստանի Կոմալայի կուսակցություն, Քրդստանի աշխատավորական կուսակցություն, անջատողական շարժումներ:

Курдская проблема в Иране в годы президентства М. Ахмадинежада (2005-2013 гг.)

Петросян Лиана Р.

Ереванский государственный университет, факультет Востоковедения, кафедра Иранистики, старший лаборант, преподаватель, к.и.н. (Ереван, РА)
lianapetrosyan@ysu.am

Аннотация: Этнический национализм является важной составляющей внутривнутриполитической жизни любого государства с учетом необходимости укрепления внутренней безопасности данной страны, а в случае с Ираном еще и того, что он находится на стыке цивилизаций и этнических группы.

Помимо экономических и политических недовольств внутри страны, одной из проблем, с которыми М. Ахмадинежад столкнулся с первого дня его президентства, был растущий вызов сепаратизму среди некоторых этнических и религиозных групп в Иране. Особенно тюркоязычное и курдское население страны чаще пытается добиться так называемой культурной свободы и местной автономии по отношению к Тегерану.

Ключевые слова: ИРИ, А. Хаменеи, М. Ахмадинежад, духовный лидер, курдский вопрос, Большой Курдистан, Иранский Курдистан, Курдистанская партия Комала, Рабочая партия Курдистана, сепаратистские движения.

The Kurdish issue in Iran during the presidency of M. Ahmadinejad (2005-2013)

Petrosyan Liana R.

Yerevan State University, Faculty of Oriental Studies, Department of Iranian Studies, department senior assistant, lecturer (Yerevan, RA)
lianapetrosyan@ysu.am

Abstract. Ethnic nationalism is an important component of the internal political life of any state, taking into account the need to strengthen the internal security of that country, and in the case of Iran, also the fact that it is at the crossroads of civilizations and ethnic groups.

In addition to economic and political grievances within the country, one of the problems that Mahmoud Ahmadinejad has faced since the first day of his presidency has been the growing challenge to separatism among some ethnic and religious groups in Iran. Especially the Turkic-speaking and Kurdish population of the country is more often trying to achieve the so-called cultural freedom and local autonomy in relation to Tehran.

Keywords: Iran, A. Khamenei, M. Ahmadinejad, spiritual leader, Kurdish issue, Greater Kurdistan, Iranian Kurdistan, Komala Kurdistan Party, PKK, separatist movements.

Իրանի՝ շուրջ 80-միլիոնանոց բնակչությունն աչքի է ընկնում էթնիկ, լեզվական ու դավանական բազմազանությամբ: Դրա հիմնական մասը կազմող իրանալեզու էթնիկական խմբերը ունեն հնդեվրոպական ծագում: Իրանի բնակչությունը կազմված է պարսիկներից, ատրպատականյան թյուրքերից, քրդերից, բելուջներից, թուրքմեններից, արաբներից, հայերից, թալիշներից և այլն: Պետք է նշել, որ ըստ Իրանի Սահմանադրության՝ այստեղ չկան էթնիկական իմաստով փոքրամասնություններ, և ըստ դրա՝ ԻԻՀ-ում ճանաչվում է միայն

կրոնական փոքրամասնությունների իրավական կարգավիճակը [1, էջեր 172-174]: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ԻԻՀ Սահմանադրությամբ թույլատրվում է էթնիկ խմբերի ներկայացուցիչների՝ տեղական լեզուներով գրականության հրատարակումը և ՉԼՄ-ների գործունեությունը [13]:

Ի հավելումն երկրի ներսում առկա տնտեսական ու քաղաքական դժգոհությունների՝ նախագահության առաջին իսկ օրվանից Մ. Ահմադինեժադի դեմ ծառայած խնդիրներից էր Իրանի որոշ էթնիկական ու կրոնական խմբերի

շրջանում անջատողականության աճող մարտահրավերը: Խոսքը վերաբերում է հատկապես Իրանի այն տարածքներին, որոնք բնակեցված են ատրպատականյան թյուրքերով, սուննի քրդերով, արաբներով ու բելուջներով¹: Այս խմբերից յուրաքանչյուրը հաճախ է Իրանը լուրջ քաղաքական մարտահրավերների առաջ կանգնեցրել: Հատկապես երկրի թյուրքախոս ու քուրդ ազգաբնակչությունը ավելի հաճախ է փորձում Թեհրանի նկատմամբ, այսպես կոչված, մշակութային ազատության և տեղական ինքնավարության հասնել:

Էթնիկ ազգայնականությունը ցանկացած պետության ներքաղաքական կյանքի կարևոր բաղադրարար է՝ հաշվի առնելով տվյալ երկրի ներքին անվտանգության ամրապնդման անհրաժեշտությունը, իսկ Իրանի պարագայում՝ նաև քաղաքակրթությունների ու էթնիկ խմբերի խաչմերուկում լինելու հանգամանքը: Իրանի արևմտյան ու հարավարևելյան շրջաններում էթնիկ ազգայնականների գործունեությունը, որոնցում տնտեսական ու կրոնական իրավիճակը նկատելիորեն տարբերվում է Իրանի մյուս նահանգներից, և այդ տարածքներում արտաքին ուժերի կողմից խթանվող սադրանքների հնարավորությունը կարող է նշանակալից լինել: Իրավիճակը բարդանում է, այսպես կոչված, «իբրև տարանջատված ժողովուրդների» («իռեդենտիզմ») առկայությամբ: Մի կողմից Իրանը հնարավորություն է ստանում ազդել հարևանների վրա, բայց մյուս կողմից հարևանները կարող են իրենց քարոզի թիրախ էթնիկ խմբին դրդել Իրանում միջէթնիկ բախումների:

Մ. Խաթամիի նախագահության ավարտից հետո էթնիկ շրջաններում վարչակարգի քաղաքականության դեմ ուղղված քաղաքացիական անկարգությունները դարձել էին Իրանի աճող քաղաքացիական հասարակության առավել նկատելի բաղադրիչը: Էթնիկ շարժումները շարունակում էին ազդեցիկ լինել երկրում քաղաքական օրակարգի մի հատվածի ձևավորման առումով, ինչն ակնհայտ էր նախագահի թեկնածուների կողմից 2005, 2009 և 2013 թվականների ընտրություններին իրենց քարոզարշավների ընթացքում էթնիկ և կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցերում շարունակական ջանքերի ու հռետորաբանության մակարդակներում: 2005 թ. նախագահական ընտրությունների հետևանքներից էր այն, որ Իրանում փակվել էր «խաթամիական ժողովրդավարական բարեփոխումների» հնարավորության պատուհանը:

¹ Հարկ է նշել, որ ի տարբերություն Իրանում մեծամասնություն կազմող իսլամի շիա կրոնական ուղղության հետևորդների՝ վերջին երեքն ունեն նաև իսլամի սուննի կրոնական ուղղության հետևորդ բնակչություն:

Այնուամենայնիվ, իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել Մ. Ահմադինեժադի՝ Իրանի վեցերորդ նախագահ ընտրվելուց հետո, ցույց էին տվել, որ ժողովրդավարական փոփոխությունների համար իրականացվող քայլերը շարունակում էին զգալի դինամիզմ դրսևորել:

Այսպես կոչված՝ միացյալ և Մեծ Քրդստան ստեղծելու ազգայնական ծրագրում որոշ քրդական քաղաքական ուժեր դիտարկում են նաև Իրանի սուննի քրդերով բնակեցված Քրդստան նահանգը և հարակից շրջանները, որոնք նույն ազգայնական շրջանակների կողմից կոչվում են «Արևելյան կամ Իրանական Քրդստան»: Քրդական ազգայնականության այս, ըստ էության, անջատողական միտումը որոշ դեպքերում ուղղակիորեն և անուղղակիորեն խթանվում է Իրանի տարածաշրջանային և արտատարածաշրջանային հակառակորդների ու մրցակիցների կողմից: Վաշինգտոնը տարածաշրջանում միշտ էլ շահարկել է «քրդական գործոնը» և մտադիր է եղել Սիրիայում ու Իրանում քրդական անջատողական ուժերին օգտագործել որպես «հինգերորդ շարասյուն»՝ իշխող վարչակարգերի վրա ճնշում գործադրելու համար:

Իրանում քրդերը բնակվում են հիմնականում երկրի հյուսիսարևմտյան հատվածում (այսպես կոչված՝ իրանական Քրդստանում) և կազմում են Իրանի բնակչության շուրջ 7 %-ը²: Ի տարբերություն Իրանի մյուս էթնիկ խմբերի՝ այստեղի քրդերից շատերը հակված են անջատողական շարժումների հրահրմանը³: Թուրքիայի և Իրանի կառավարությունները վախենում են, որ Հյուսիսային Իրաքում կիսանվտանգ պետություն ստեղծելը կարող է դրդել «սեփական» քրդախոս բնակչությանը՝ ճնշումներ գործադրելու տեղական իշխանությունների նկատմամբ էթնիկական իմաստով իրավունքների ավելի լայն շրջանակ ունենալու համար: Բայց Քավեհ Լ. Աֆրասիաբին՝ իրանական արտաքին քաղաքականության ամերիկացի փորձագետը, պնդում է, որ Իրանի անհանգստությունը քրդական անջատողականության վերաբերյալ չի մոտենում Թուրքիայի մակարդակին [8, էջ 5], թեպետ պարբերաբար

² Իրանում բնակվում է մոտավորապես 4 միլիոն քուրդ, Թուրքիայում՝ 12 միլիոն, իսկ Իրաքում՝ 6: Խոսում են քրդերենի կուրմանջի և սորանի բարբառներով: Քրդերի մոտ 70 %-ը սուննի մահմեդականներ են, 20 %-ը՝ շիաներ, իսկ 10 %-ը՝ Ահլ-է հադի հետևորդներ:

³ Անցյալում այդ միտումները լարվածություն են առաջացրել պետության ներսում և ժամանակ առ ժամանակ բռնության են ենթարկվել (վերջին տարիներին անջատողականների հետ կապված ամենամեծ բռնի միջադեպը տեղի է ունեցել Թուրքիայում 1999 թ. փետրվարին Արդուլլահ Օջալանի՝ Քրդստանի աշխատավորական կուսակցության այն ժամանակվա առաջնորդի ձերբակալությանն ի պատասխան):

բախումներ են տեղի ունեցել քրդերի և իրանական անվտանգության ուժերի միջև: Ենթադրություններ կան, որ Իսրայելը մեծացրել է իր կապերը իրանական քրդերի հետ և խթանել հետախուզական գործողությունները Իրանի հյուսիս-արևմուտքում քրդերի ու մեծամասնություն կազմող շիա պարսիկների միջև էթնիկ ճեղքեր առաջացնելու համար [7, էջ 134]:

2005 թ. հուլիսի 9-ին իրանական քրդաբնակ Մահաբադ քաղաքում ուսանողները ցույցեր էին անցկացրել Էսթեղալի հրապարակում 1999 թ. Թեհրանում ուսանողական բողոքի ցույցերի օրը նշելու համար, որոնք ճնշվել էին կառավարական ուժերի կողմից: Մահաբադում անվտանգության ուժերը փորձել էին ձերբակալել հայտնի քուրդ ակտիվիստ և ցույցերի կազմակերպիչներից մեկին՝ Շավանե Ղադերին, սակայն հանդիպելով դիմադրության՝ սպանել էին վերջինիս: Այդ միջադեպից հետո Մահաբադում և քրդաբնակ այլ քաղաքներում ութօրյա բողոքի ցույցեր էին սկսվել, որոնք հանգեցրել էին անհայտ քանակի ձերբակալությունների և անվտանգության ուժերի կողմից մոտ 20 մարդու սպանության [11]: Սրանց ազդեցության տակ 2005 թ. օգոստոսին՝ Մ. Ահմադինեժադի երդմնակալության արարողությունից հետո, կառավարությունը, վկայակոչելով «անվտանգության մարտահրավերները», ակտիվիստներին, լրագրողներին ու մտավորականությանը մեղադրել էր ընդդիմության հետ սերտ գործակցության պայմաններում երկրի ներսում խառնաշփոթ հրահրելու և էթնիկ ու ռասայական հակամարտություն սրելու մեջ:

Արդեն 2006 թ. ստեղծվել էր Քրդական միացյալ ճակատը, որպեսզի խաղաղ պահանջեր այն իրավունքները, որոնք իրենց կարծիքով մերժվում էին քրդերին, այլ կերպ ասած՝ հասնելու քրդերի իրավունքների ճանաչմանը [6]: Կազմակերպության ղեկավար էր դարձել Բահաեդդին Ադաբը (մահացել է 2007 թ.՝ քաղցկեղից): Նրա գլխավորությամբ կազմակերպությունը հայտարարել էր, որ իր նպատակը քրդերի իրավունքների հստակեցումն է և քաղաքային խորհուրդների ու խորհրդարանների ներկայացուցիչների ընտրության հարցում վերջիններիս աջակցությունը, քանի որ դա միակ ճանապարհն էր, որով քրդերը կարող էին վերև բարձրանալ իշխանական համակարգի աստիճաններով: Պետք է փաստել սակայն, որ իշխանությունները մերժել էին կառուցողական երկխոսությունը՝ շարունակելով քուրդ ակտիվիստների դեմ գործողությունները:

2006 թ. փետրվարին Մակուում և այլ քաղաքներում քուրդ ցուցարարների և անվտանգության ուժերի միջև բախումները ինը ցուցարարի մահվան պատճառ էին դարձել: Հաջորդ ամիս խորհրդարանի քուրդ անդամները

դիմել էին նախագահին՝ պահանջելով հետաքննություն անցկացնել սպանությունների վերաբերյալ և կոչ անելով, որ պատասխանատուները պատժի ենթարկվեն [4]: Թեպետ հետաքննություն էր սկսվել, սակայն դրա արդյունքները այդպես էլ հայտնի չէին դարձել:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Իրանի քուրդ ազգայնականության շահերը ներկայացված են մի քանի քաղաքական խմբի կողմից, որոնց գործունեությունը երկրի ներսում արգելված է, և դրանց կենտրոնները տեղակայված են հարևան Իրաքում: Դրանք են՝ Իրանի Քրդստանի Դեմոկրատական կուսակցությունը, իրանական Քրդստանի Կոմալայի կուսակցությունը, Քրդստանի աշխատավորական կուսակցությունը և Քրդստանի «Ազատ կյանք» կուսակցությունը: Այս ամենին զուգընթաց Իրանում քրդական շարժումը պառակտված է: Բազմաթիվ քաղաքական կազմակերպություններ, խմբեր, անհատներ չեն ներկայացնում մեկ քաղաքական ամբողջություն, և երբեմն նրանք հենց միմյանց դեմ են պայքարում՝ գաղափարական և այլ դրդապատճառներից ելնելով:

Ամենահին քրդական ընդդիմադիր խմբավորումը Իրանի քրդական ժողովրդավարական կուսակցությունն էր⁴, որը պառակտվել է 2006 թ. վերջին: Քայքայված կուսակցության անդամների մեծամասնությունը Մուստաֆա Հիջրիի գլխավորությամբ պահպանել է խմբակցության ԻԶԺԿ անվանումը: 2007 թ. սեպտեմբերին ԻԶԺԿ-ն զեկուցել էր, որ Իրանում ավելի քան 300 մարդ բանտարկված է կամ նրա առջև անհիմն մեղադրանքներ են առաջադրվել քրդական քաղաքական խմբավորումներին ցուցաբերած աջակցության հիմքով: Ըստ ԻԶԺԿ-ի՝ նրանցից առնվազն 200-ը դատապարտվել էին ազատագրվման վեց ամսից մինչև 20 տարի ժամկետով ներառյալ մի շարք դեպքեր, որոնց վերաբերյալ Amnesty International-ը քիչ թե շատ հաստատված տեղեկություններ ուներ: Օրինակ՝ ԻԶԺԿ-ի համաձայն Սանանդաջի հասարակական գործիչ Չահանդար Մոհամմադին 2007 թ. հունվարին դատապարտվել էր 15 տարվա ազատագրվման «քրդական քաղաքական ընդդիմության խմբերի հետ կապի համար», 2006 թ. դեկտեմբերին Բուկանից «քաղաքական բանտարկյալ» Սմկո Ղադերփուրը դատապարտվել էր 11 տարվա ազատագրվման նմանատիպ մեղադրանքով [2, էջ 5]:

Արդեն 2008 թ. նոյեմբերին ԻԶԺԿ-ն հայտարարել էր Իրանում բոլոր տեսակի ռազմական գործողությունների դադարեցման մասին և ընդունել Իրանում քրդական հարցի

⁴ Կուսակցությունը հիմնադրվել է 1945 թ. օգոստոսի 16-ին Մահաբադում:

ժողովրդավարական լուծման վերաբերյալ հռչակագիրը, որում ուրվագծվում էր քրդական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու տեսլականը: Սակայն իրանական իշխանություններն անտեսել էին այս փաստաթուղթը և հայտարարել Իրաքի հետ սահմանի երկայնքով պատնեշի կառուցման մասին, որի նպատակը ԻԶԺԿ-ի գրոհայինների մուտքի կասեցումն էր երկրի տարածք [10]:

Ըստ էության՝ Իրանի քուրդ անջատողականներն անհանգստանում էին, որ տարածաշրջանում Իրանի դիրքերի ամրապնդմանը զուգընթաց «Արևելքի (իրանական)» և «Հարավային (Իրաքի) Քրդստանը» կարող էին հայտնվել շիաների ազդեցության տակ: Քուրդ ակտիվիստները մտավախություն ունեին, որ Իրանի կառավարությունը ծրագրում էր ստեղծել տարածաշրջանային շիայական գերտերություն, որը ոչնչացնելու էր քուրդ ժողովրդի մշակութային արժեքները: Իրա համար հիմք էր ծառայում այն հանգամանքը, որ գալով իշխանության՝ Մ. Ահմադինեժադը երկրում արգելել էր աշխարհիկության, ֆեմինիզմի և լիբերալիզմի խնդիրները քննարկող արևմտյան ֆիլմերի ցուցադրությունն ու հրապարակումները՝ դրանք դիտարկելով որպես Իրանի վրա ճնշում գործադրելու «համաշխարհային քարոզչություն», և շեշտը դրել իրանական ազգայնականության ու շիայական իսլամի ավանդույթներին վերադառնալու ձգտման վրա:

2009 թ. նախագահական ընտրություններին ընդառաջ՝ Քերմանշահի ապրիլյան մարտերում, որոնք սկսվել էին ԻԶԺԿ-ի հարձակմամբ Քերմանշահի ոստիկանական բաժանմունքի վրա, ԻԶԺԿ-ի կողմից սպանվել էր 43 իրանցի զինծառայող, որի պատճառով Ա. Խամենեին պաշտոնից հեռացրել էր տեղի ԻՀՊԿ ղեկավարին, իսկ մայիսին ութօրյա այց կատարել Իրանի քրդաբնակ շրջաններ իրավիճակը տեղում ուսումնասիրելու և համերաշխության կոչով հանդես գալու համար [5]: Սակայն նրա ջանքերը չէին ազդել նախագահի նախընտրական քարոզարշավի ընթացքի վրա. նահանգի խոշոր քաղաքներում, որոնցից է Սանանդաջը, ընտրությունները բոյկոտելու հայտարարություններ էին տարածվել: Քրդական ընդդիմությունը հայտարարել էր, որ այս ընտրությունը լավ կամ վատ թեկնածուի ընտրություն չէ, քանի որ նրանք բացառապես իշխող վերնախավի փոփոխություն են ցանկանում: Չնայած նախագահական ընտրությունները բոյկոտելու հայտարարություններին՝ արդյունքում քրդաբնակ քաղաքներն աջակցել էին նախագահի իրենց թեկնածուին, այն է՝ Մ. Քարուբին: Արդեն նախագահական ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո քուրդ ակտի-

վիստները մասնակցել էին հակակառավարական բողոքի ցույցերին:

Մ. Ահմադինեժադի նախագահության վերջին տարում քրդական կուսակցությունների՝ մեկ միասնական ազգային ճակատում միավորվելու փորձեր էին նկատվում: 2012 թ. օգոստոսի 22-ին Իրանի Քրդստանի և Կոմալայի Դեմոկրատական կուսակցությունները ստորագրել էին գործակցության համաձայնագիր, որը Իրանի քրդաբնակ շրջաններում պետք է «մեծ քաղաքական դաշինքի հիմք» հանդիսանար [12, էջ 291]: Սակայն համաձայնագիրը ոչ միանշանակ էր ընդունվել Իրանի քրդերի քաղաքական շարժումների այլ ներկայացուցիչների կողմից, և կարելի է ենթադրել, որ հենց այս մասնատվածությունն էլ վերջիններիս անհաջողությունների պատճառ էր դարձել:

Առհասարակ պետք է փաստել, որ ի լրումն քաղաքական խնդիրների՝ Իրանի քրդերի առջև ծառայած էին նաև սոցիալ-տնտեսական մարտահրավերներ: Բանն այն է, որ Իսլամական հեղափոխությունից առաջ Իրանի քրդաբնակ շրջանները տնտեսապես հետամնաց էին, քանի որ Իրանում քրդերի բնակության վայրերը համարվում են խորքային ծայրամասեր, և թեպետ հետագայում նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման միտումներ կային, սակայն Իրանի քրդաբնակ շրջաններում աղքատության մակարդակը հասնում էր շուրջ 60 %-ի [9]: Բացի այդ, սուր էին դրված խմելու ջրի, էլեկտրաէներգիայի, բնակարանաշինության, բարձրագույն կրթության և որակյալ բժշկական խնամքի խնդիրները:

Քրդաբնակ շրջանների սոցիալ-տնտեսական իրադրության բարելավման նպատակով իրանական իշխանությունները փորձում էին զարգացնել քրդաբնակ շրջանների ենթակառուցվածքն ու տնտեսությունը, որի հիմքը գյուղատնտեսությունը, անասնապահությունն ու արհեստագործական արտադրությունն էին: 2011 թ. Իրանի կառավարությունը գումար էր հատկացրել Քրդստանի նահանգի վարչական կենտրոնում գտնվող Սանանդաջում ավտոմոբիլային գործարանի կառուցման համար [3]:

Ամփոփելով պետք է նշել, որ.

➤ Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման սկզբնական շրջանում Իրանի քուրդ ակտիվիստները հույս ունեին Արևմուտքի և ԱՄՆ աջակցությամբ լուծել իրենց էթնիկ-քաղաքական խնդիրները, այդ իսկ պատճառով գործակցում էին Իրաքի քրդերի հետ իրանա-իրաքյան քրդաբնակ շրջաններում քրդական անկախ հանրապետություն ստեղծելու համար:

➤ 2009 թ. նախագահի պաշտոնում Մ. Ահմադինեժադի վերընտրվելը քրդերը դիտարկում էին որպես մարտահրավեր իրենց ազգայնական ձգտումներին և որպես սպառ-

նալիք՝ Իրաքում իրանական քաղաքական գերակայության համար: Քրդական քաղաքական այլընտրանքը, որն ընդգրկված էր Քրդստանի սահմանադրության նախագծում, ուղղված էր Հյուսիսային Իրաքում ֆորպոստի ստեղծմանը իրանական գաղափարական ու քաղաքական էքսպանսիան զսպելու համար:

➤ 2009 թ. ծագած Կանաչ շարժման ընթացքում ԻԲԺԿ-ն հույս ուներ, որ տարբեր քաղաքներում սկսված բողոքի գործողությունները հետագայում վերածվելու էին քրդական զանգվածային շարժման, սակայն նրանք հաշվի չէին առնում այն հանգամանքը, որ Իրանում բնակվող քրդերի քաղաքական կազմակերպություններն այդ շրջանում չունեին այն նույն ազդեցությունը, ինչն ունեցել էին շահի միապետության տապալման ժամանակ: Նրանք պառակտված էին և չունեին այնպիսի առաջնորդ, ինչպիսին ժամանակին Ա. Ղասեմլուն էր:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Раванди-Фадан Л. М.**, Этно-конфессиональные проблемы в современном Иране, Памяти А. З. Арабаджяна, Иран при М. Ахмадинежаде, ИВ РАН, Москва, 220 стр.
2. **Amnesty International Publications (2008)**, Amnesty International Publications, Iran: Human rights abuses against the Kurdish minority, Peter Benenson House, London, 61 pages
3. **Bit (2011)**, Sāxt-e kārkhāne-ye Irān Xodrū dar Kordestān āgāz šod (Մեկնարկեց Իրանխողրոյի գործարանի կառուցումը Քրդստանում), (23.12.2011), <https://bit.ly/35zFgYA>, (հւն. 17.07.2022)
4. **Brandon J.**, Iran's Kurdish Threat: PJAK, (15.06.2006), [https://archive.vn/20130113043829/http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews\[tt_news\]=805&tx_ttnews\[backPid\]=181&no_cache=1#select ion-721.0-721.27](https://archive.vn/20130113043829/http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews[tt_news]=805&tx_ttnews[backPid]=181&no_cache=1#select ion-721.0-721.27), (հւն. 17.07.2022)
5. **Dw (2009)**, Safar-e Āyatollāh Xāmenei be Kordestān, payāmhā va peyāmadhā (Այաթոլլահ Խամենեյիի՝ Քրդստան կատարած ուղևորությունը. ուղերձներն ու հետևանքները), (14.05.2009), <https://www.dw.com/fa-ir/آیتالله-سفر>

6. **Esfandiari G.**, Iran: Kurds from Front to Demand Rights, (03.01.2006), <https://www.rferl.org/a/1064384.html>, (հւն. 17.07.2022)
7. **Gunter M.**, The Kurds Ascending: The Evolving Solution to the Kurdish Problem in Iraq and Turkey, Palgrave Macmillan, New York, 193 pages
8. **Hussein D. H.**, Iran: Profile of President Mahmoud Ahmadinejad, CRS Report for Congress, The Library of Congress, Julay, (pdf), p. 1-6
9. **Kurdistan (2011)**, Депутат иранского парламента: в Иранском Курдистане царит бедность в результате преднамеренного лишения его финансирования, (01.07.2011), https://kurdistan.ru/2011/01/07/news-8589_Deputatranskogo_parlamenta_vranskom_Kur_126_distane_carit_bednost_v_rezultate_prednamerennogo_lisheniya_ego_finansirovaniya.html, (հւն. 17.07.2022)
10. **Magiran (2008)**, Esteqbāl-e Irān az eḥdāṭ divār-e hā'el dar marz-e Kordestān-e E'rāq (Իրանը ողջունում է Իրաքյան Քրդստանի հետ սահմանին պաշտպանիչ պատի կառուցումը), (14.01.2008), <https://www.magiran.com/article/1554897>, (հւն. 17.07.2022)
11. **Theguardian (2005)**, Iran sends in troops to crush border unrest, (05.08.2005), <https://www.theguardian.com/world/2005/aug/05/iran.michaelhoward>, (հւն. 17.07.2022)
12. **Yesiltas O.**, Rethinking the National Question: Anti-Statist Discourses within the Kurdish National Movement, (24.03.2014), <https://digitalcommons.fiu.edu/cgi/viewcontent.cgi?article=2318&context=etd>, (հւն. 17.07.2022)
13. **Lu.ac (1989)**, Matn-e kāmel-e Qānun-e asāsi-ye jomhuri-ye Eslāmi-ye Irān hamrāh bā ešlāhāt-e sāl-e 1368 (ԻԻՀ՝ Սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989թ. փոփոխություններով), (30.05.2019), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf, (հւն. 17.07.2022)

Տճանա/Հանձնվել է՝ 13.07.2022
 Рецензирована/Գրախոսվել է՝ 25.07.2022
 Принята/Ընդունվել է՝ 29.07.2022